Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունների անդամ չհանդիսացող երկրներում

- Արգենտինա - ֆերմերներին տրամադրվող փոխառություններ՝ արտադրության զարգացման և վերաֆինանսավորման համար
- Բրազիլիա - գյուղատնտեսության ապահովագրության ծրագիր
- Չիլի - գյուղատնտեսության ապահովագրություն և արտակարգ գյուղատնտեսական հիմնադրամ
- Կիպրոս - գյուղատնտության ապահովագրության կազմակերպությունների մասնակի ֆինանսավորում
- Իսրայել - ապահովագրության ազգային ծրագրի սուբսիդավորում, կանխավճարներ ֆերմերներին, չապահովագրված ֆերմերներին ֆինանսական օգնության տրամադրում, բերքի ապահովագրության դեպքում վարչական ծախսերի սուբսիդավորում:

Այստեղից հետևություն, որ գյուղատնտեսության ապահովագրության գծով ռիսկերի նվազեցման նպատակով կատարվում են, ոչ միայն տնտեսական համագործակցության երկրների աջակցության ծրագրերի իրականացումը, այլ նաև յուրաքանչյուր երկրի կառավարության ֆինանսական սուբսիդավորումը: Միաժամանակ ուսումնասիրությունների արդյունքում հանգում ենք հետևյալին, որ գյուղատնտեսության ապահովագրությունը ՀՀ-ում արմատավորելու համար, որպես առաջնային և պարտադիր խնդիր պետք է կարողանալ ներգրավվել ֆինանսական աջակցության ծրագրերին, իսկ տրամադրված գումարներն օգտագործել նպատակային, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով՝ հսկողության ներքո:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի տարածքը տիպիկ լեռնային է՝ բարդ ու բազմազան բնական և տնտեսական բնութագրերով: Այդպիսին է բնականաբար նաև նրա հողային ծածկոցը: Ընդհանրապես ցանկացած տարածքում հողածածկը ձևավորվում և զարգանում է տվյալ վայրի բնական, այնուհետև նաև տնտեսական գործոնների համատեղ ազդեցության ներքո և դրանց հետ միասին կազմում է մեկ միացյալ բնական-տնտեսական համալիր:

Կլիմայական պայմանների առումով Հայաստանի ինտենսիվ գյուղատնտեսության գոտիների տարածքների մեծամասնությունը համարվում է ռիսկային, որտեղ արտադրության ճակատագիրը մեծ չափով կախված է տարվա եղանակային պայմաններից: Ցածրադիր և նախալեռնային գոտիներում, ինչպես նաև լեռնային գոտու տարածաշրջանների գերակշիռ մասում ոռոգումը նորմալ և կայուն բերք ստանալու անհրաժեշտ պայմանն է: Այս հանգամանքը պետք է անպայման հաշվի առնել արտադրության կազմակերպման, նրա մասնագիտացման խնդիրները լուծելիս:

1991թ. Հայաստանում հողերի սեփականաշնորհման արդյունքում վարելահողերի և այգիների ֆոնդը բաժանվեց-տրոհվեց հարյուր հազարավոր բեկորների, որոնց մանրակրկիտ հաշվառումը և քարտեզագրումը դեռևս կատարված չէ: Սակայն կարևորն այն է, որ հողերի մասնատումը հանգեցրեց դրանց օգտագործման պայմանների վատթարացման, որի հետևանքները մենք կվերլուծենք քիչ հետո: Անգամ մինչև հողերի սեփականաշնորհման իրականացումն էլ, ինչպես ցույց են տալիս որոշ աղբյուրներ[1], հողակտորների 73,3%-ի միջին չափը չէր հասնում 2 հեկտարի: Այսպիսի անբարենպաստ հողային ֆոնդի պարագայում էլ, Հայաստանը, միաժամանակ սակավահող երկիր է: Նրա տարածքի վրա, ներկայումս, բնակվում է շուրջ 3 մլն մարդ կամ մեկ կմ^2-ի վրա 100-ից ավելի մարդ: Հաշվի առնելով նաև հողերի բերրիության ցածր մակարդակը, պետք է միանշանակ ընդգծել, որ հողապահովվածության այս մակարդակը միանգամայն անբավարար է բնակչությանը պարենով ապահովելու համար: Հայաստանը պարենի գծով եղել է, կա ու տեսանելի հեռանկարում էլ կլինի պակասորդային, ներմուծող երկիր:

Հայաստանի գյուղատնտեսական հողային ֆոնդի վիճակի ու հողապահովվածության վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ երկրում գյուղատնտեսական արտադրության առաջնահերթ և գլխավոր խնդիրը հողային ֆոնդի լրիվ և ինտենսիվ օգտագործումն է:

Հանրապետության վարելահողային ֆոնդը, տեղաբաշխված լինելով բնակլիմայական տարբեր պայմաններում, ունենալով հողագիտական ու տնտեսական տարբեր բնութագրեր, օգտագործվելով ջրովի, կիսաջրովի և անջրդի պայմաններում, ունի տնտեսական բերրիության խիստ տարբեր մակարդակներ, ինչն առավել հստակ արտահայտվում է նրանց կադաստրային գնահատման ցուցանիշներով: Այսպես, մեր կողմից կազմված սանդղակի համաձայն[2], Արարատյան հարթավայրում տեղաբաշխված վարելահողերը, 100 բալանոց սանդղակում ստացել են 88-93, իսկ Շիրակի մարզի հյուսիս-արևմուտքում տեղաբաշխվածները՝ 12-20 բալ:

1991թ. Հայաստանում իրականացված արմատական բարեփոխումներն էական փոփոխություններ մտցրեցին հողօգտագործման սոցիալական կառուցվածքում, ձևավորվեցին նոր հողային հարաբերություններ՝ հիմնված հողի նկատմամբ սեփականության բազմաձևության վրա՝ մասնավոր սեփականության ճնշող գերակայությամբ:

Նախկին կոլտնտեսությունների ու պետական ձեռնարկությունների լուծարման հենքի վրա ձևավորվեցին մեծ թվով փոքր ու մանր գյուղացիական տնտեսություններ, որոնց թիվը ներկայումս հասնում է շուրջ 339 հազարի:

Ընդհանուր առմամբ Հայաստանում գյուղացիական տնտեսությունների հողապահովվածությունը, դատելով աղյուսակ 1-ի տվյալներով, կարելի է գնահատել որպես խիստ ցածր՝ միջինը 1,37 հեկտար պիտանի հողեր[3]: Սրան էլ եթե ավելացնենք հողաբաժինների բաժանվածությունը մի քանի կտորների, ապա պատկերը կլինի ավելի ստույգ և նույն չափով էլ տխուր: Դժվար չէ եզրակացնել, որ գյուղացիական տնտեսությունների չափերի գոյություն ունեցող պայմաններում հնարավոր չէ կազմակերպել մասնագիտացված հոծ ապրանքային արտադրություն: Հողօգտագործման չափերը և նրա վիճակը որոշակիորեն կանխորոշում են գյուղացիական տնտեսությունների ոչապրանքային, բնամթերային բնույթը:

---

[1] Մկրտչյան Հ, Վարդանյան Ռ., Հողային ֆոնդի վիճակը և գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը: Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր, ամս. Երևան, 1975, №6:

[2] Мкртчян Г.В. "Методика и шкалы экономической оценки пашни Арм.ССР" , Брошюра 1975 МСХ, Арм.ССР.

[3] Мкртчян Г.В. "Методика и шкалы экономической оценки пашни Арм.ССР" , Брошюра 1975 МСХ, Арм.ССР

Աղյուսակ 1

Գյուղացիական տնտեսությունները և դրանց հողօգտագործումը ՀՀ մարզերում 01.01.2007թ. [1]

Մարզեր	Գյուղացիական տնտեսությունների		Մեկ տնտեսությանն ընկնում է (հեկտար)			
				որից		
	քանակը	ընդհանուր հողատարածությունը (հազ.հեկտ.)	Օգտագործելի հողեր	վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք և արոտ
Արագածոտնի	37119	57,6	1,55	1,27	0,13	0,15
Արարատի	53102	31,9	0,60	0,42	0,16	0,02
Արմավիրի	50332	40,4	0,80	0,50	0,21	0,01
Գեղարքունիքի	51340	76,3	1,49	1,14	0,02	0,33
Լոռու	32542	63,7	1,96	1,27	0,03	0,66
Կոտայքի	37611	40,8	1,08	0,78	0,10	0,20
Շիրակի	28151	66,6	2,37	2,26	0,01	0,10
Սյունիքի	12945	46,7	3,14	2,64	0,19	0,31
Վայոց Ձորի	12826	16,9	1,31	1,00	0,14	0,17
Տավուշի	21930	26,3	1,20	0,97	0,06	0,17
Ընդամենը ՀՀ-ում	337906	461,3	1,37	1,07	0,10	0,20

Դիտարկելով 1991թ. սկսված բարեփոխումների արդյունքները, պետք է նշել, որ չնայած բարեփոխումների քաղաքական, մասամբ էլ սոցիալական որոշ դրական հետևանքների, բարեփոխումները տեխնոլոգիական, տեխնիկական և արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության տեսակետից ունեցան, հիմնականում, բացասական հետևանքներ: Այդ հետևանքների պատճառները կարելի է ներկայացնել հետևյալ կետերով՝

- հողային ֆոնդը բաժանվեց-տրոհվեց մեծ թվով մանր ու գաճաճ կոտրների.
- շատ տնտեսություններում ստեղծվեցին պատնեշներ, սեփական ճանապարհներ, ջրատարներ, որի համար օգտագործվեցին պիտանի հողերի 5-10%-ը,
- խոշոր տնտեսության համար ստեղծված գոյություն ունեցող տեխնիկան և ոռոգման համակարգը գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի պայմաններում օգտագործվում են խիստ ցածր արդյունավետությամբ,
- ներքին ոռոգման ցանցի ապապետականացման, ինժեներատեխնիկական միջոցների անսարքության, ոռոգման գործի կազմակերպական անկայունության հետևանքով ավելի քան կիսով չափ կրճատվեցին ոռոգվող տարածությունները, կտրուկ իջավ ջրի օգտակար գործողության գործակիցը,
- էապես կազմալուծվեց գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքի համակարգը, այդ թվում նաև վերամշակող արդյունաբերությունը, մի շարք կարևոր ճյուղերում առաջացավ արտադրանքի իրացման հիմնախնդիր,
- գյուղատնտեսության հողային ֆոնդի օպերատիվ կառավարման համակարգի բացակայությունը հանգեցրեց հողօգտագործման ընդհանուր վիճակի վատթարացմանը:

Ստորև բերված աղյուսակ 2-ում ամփոփված են վարելահողերի ու բազամյա տնկարկների տարածությունների շարժընթացը՝ 1990թ. հետո ընկած ժամանակաշրջանում:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ 1990-2007թթ. ընթացքում վարելահողերի տարածքը ավելացել է 2,1%-ով՝ քանդված այգիների հաշվին: Այնուհետև, բազմամյա տնկարկների տարածքը պակասել է 31,9 հազ. հեկտարով: Ընդ որում, այգիների քանդման գործընթացը, որը բավականին ինտենսիվ ընթանում էր 1990-1997թթ, 2000թ. հետո զգալիորեն դանդաղեց, իսկ 2004թ. նկատվեց դրանց ընդարձակման էական միտում:

[1] Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀԱՎԾ, Ե., 2008:

Աղյուսակ 2

Վարելահողերի և բազմամյա տնկարկների շարժընթացը ՀՀ-ում[1]

Տարիներ		Վարելահող ընդամենը	Բազմամյա տնկարկներ		Ցանքի ենթակա տարածքը	որից		
						ցանքի տակ	Չի օգտագործվել	
			տարածքը	փոփոխություն + կամ -			տարածքը	նույնը %-ով
1990		484,0	79,2	x	484,0	439,0	44,4	9,0
1997		494,4	42,7	-36,5	530,9	337,4	193,5	36,4
2000		494,4	37,8	-4,9	535,8	303,2	232,6	43,4
2004		494,4	44,6	+6,8	529,0	325,2	203,8	38,5
2007		494,4	53,9	+9,3	519,7	306,0	213,7	41,1
2007թ. 1990-ի նկատմամբ	+ կամ -	+10,4	-25,3	x	+35,7	-133,0	+169,3	x
	նույնը %-ով	+2,1	-31,9	x	+7,4	-28,0	x	x

Մտահոգիչ է այն փաստը, որ ցանքի ենթակա տարածքը 7,4%-ով ավելանալու պարագայում ցանքատարածությունների ընդհանուր տարածքը պակասել է 133,0 հազ. հեկտարով կամ 30,2%-ով: Ցանքի ենթակա զգալի տարածքներ դուրս են մնում շրջանառությունից: 2000-2007թթ. դրանց տարածքը հասել է 214-232 հազ. հեկտարի: Հայաստանի նման սակավահող երկրում սա անթույլատրելի երևույթ է:

Հողերի չօգտագործման փաստի հանգամանքների մանրակրկիտ ուսումնասիրությունն ի հայտ է բերում այդ երևույթի պատճառները, նրա ոչ պարզունակ ու ոչ միանիշ բնույթը: Այդ պատճառները, մեր կարծիքով, կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

1. Հաշվառման գործոնը. Ներկայումս, ինչպես նշվել է վերևում, գործածության մեջ է եղած նյութերի հիման վրա 1997թ. կազմված ՀՀ հողային հաշվեկշիռը: Այդ նյութերը հնացել են և չեն համապատասխանում բնության մեջ եղած իրավիճակին: Թեք լեռնալանջերին ընկած, անկանոն ձևերի, տարբեր աստիճանների հողատարված մեծ թվով մանր ու փոքր հողակտորներ կորցրել են իրենց երբեմնի հողագիտական բնութագիրը և դարձել անօգտագործելի: Մինչդեռ, նշված հողակտորները, իրենց ելակետային չափերով նշված են հողաշինարարական քարտեզների վրա և հաշվի են առնվում հողային հաշվեկշռում որպես վարելահող:

Հողօգտագործման ճիշտ կազմակերպման շահերը պահանջում են հանրապետությունում անհետաձգելի կարգով իրականացնել հողերի համընդհանուր գույքագրում և գործածության մեջ մտցնել ստույգ հողային հաշվեկշիռ: Այն ժամանակ, մեր կարծիքով, պարզ կդառնա, որ հանրապետությունում չկա 514,0 հազ. հեկտար վարելահող, որ արտադրությունից դուրս է մնում շատ ավելի քիչ տարածություն, քան կարելի է դատել վիճակագրական ծառայության վերը բերված տվյալներով.

2. Հողերի սեփականաշնորհման ժամանակ բաշխված անջրդի նախալեռնային և լեռնային չոր տարածաշրջաններում ընկած վարելահողերի զգալի տարածություններ, փոքր չափերով և անկանոն եզրագծերով, գտնվում են բնակավայրերից պատկառելի հեռավորությունների վրա, տարբեր թեքությունների հողատարված լեռնալանջերին: Այս հողակտորների մեծ մասը գյուղացիական տնտեսությունների կողմից, որպես կանոն, չեն օգտագործվում, քանի որ դրանց մշակությունը գյուղացու հնարավորություններից դուրս է կամ պարզապես անարդյունավետ.

[1] Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀԱՎԾ, Ե., 2008: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների և հավաքված բերքի մասին 1997, 2000, 2004, 2007թթ., ՀՀԱՎԾ, Ե.: Հայաստանի գյուղատնտեսությունը 1990-1999թթ., ՀՀԱՎԾ, Ե., 2000:

3. Ոռոգման գործոնը. 1980-ական թվականներին Հայաստանում ոռոգման ջրով, լավ թե վատ, ապահովված էին շուրջ 300-320 հազար հեկտար հողատեսքեր, որոնցից ոռոգվում էր 284,0 հազ. հեկտար: Հիմա ոռոգվող հողերի հաշվառում չի կատարվում: Ոռոգման ջուրը վճարովի դառնալուց հետո ջրատնտեսական համակարգը վեր է ածվել առևտրային կազմակերպության, որը կատարում է միայն բաց թողնված ջրի և դրա դիմաց գանձված վճարների հաշվառում: Ոռոգվող մակերեսների վերաբերյալ եղած տվյալները մոտավոր գնահատումներ են: Ներկայումս համարվում է, որ 2005-2007թթ. ոռոգվել է 140-150 հազ. հեկտար կամ շուրջ երկու անգամ պակաս տարածություն: Սրան էլ ավելացնենք ոռոգման ջրի մատակարարման ռեժիմի խախտումները և անարդարացի բաշխման փաստերը.

4. Լուրջ գործոն է սահմանամերձ համայնքների հողերի օգտագործման խնդիրը, ինչը կապված է մեծ ռիսկի հետ: Հասկանալի է, որ Ադրբեջանին սահմանակից մարզերում սահմաններին հարող տարածքների հողահանդակները լրիվ և լիարժեք չեն օգտագործվում, ինչն անդրադառնում է հանրապետության հողօգտագործման ընդհանուր ցուցանիշների վրա.

5. Շուկայի գործոնը. Հայտնի է, որ հողօգտագործման ինտենսիվությունը, հավասարապես հողի գինը, ածանցվում են պարենային շուկայի իրավիճակից, գների մակարդակից: Անցած տարիների ընթացքում Հայաստանի պարենային շուկան հագեցված էր արտասահմանյան, լավ փաթեթավորված ապրանքատեսակներով, մատչելի գներով և տեղական արտադրությունը շատ դիրքերով շուկայում անմրցունակ էր, և շուկան չէր խթանում հողօգտագործման ինտենսիվացմանը:

Այնուհանդերձ, դատելով 2005-2007թթ. շուկայում դրսևորված իրավիճակով, կարելի է կանխատեսել հողօգտագործման գործընթացի ինտենսիվացման միտումներ առաջիկա տարիներին:

Թվարկած հանգամանքները, անշուշտ, բացասաբար են անդրադառնում հանրապետությունում հողօգտագործման գործընթացի և արդյունավետության վրա: Միաժամանակ, դրանք որոշակիորեն պարզաբանում են դրսևորված իրավիճակի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Վերջիններիս վերացումը կստեղծի իրատես պայմաններ հողօգտագործման արմատական բարելավման համար:

Անդրադառնալով հողօգտագործման որակական ցուցանիշների շարժընթացին, պետք է նշել, որ այստեղ նույնպես տեղի են ունեցել էական, ընդհանուր առմամբ, բացասական փոփոխություններ:

Ցանքատարածությունների 1990 և 2007թթ. ցուցանիշներն ըստ մարզերի բերված են աղյուսակ 3-ում, որը կազմված է ՀՀ վիճակագրական ծառայության համապատասխան տարիների նյութերով[1]: Աղյուսակի տվյալները տալիս են մեկնաբանությունների հարուստ նյութեր: Բայց այստեղ կսահմանափակվենք ընդհանուր զարգացումների ընդգծումով:

1. Մշակաբույսերի ընդհանուր ցանքատարածությունը կրճատվել է 133,7 հազար հեկտարով կամ 30%-ով: Առավել կտրուկ այդ գործընթացը տեղի է ունեցել Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում, համապատասխանաբար՝ 4,6 և 2,2 անգամ: Բացառություն է կազմում Արմավիրի մարզը, որտեղ ցանքատարածությունների որոշ ընդարձակումը տեղի է ունեցել խաղողի և պտղատու այգիների կտրուկ կրճատման հաշվին.

2. Ցանքատարածությունների ընդհանուր կրճատման պարագայում ավելացել են հացահատիկի (26%-ով), կարտոֆիլի (41%-ով) և բանջարեղենի (43%-ով) տարածությունները: Ցանքատարածությունների ընդհանուր կրճատումը և պարենային մշակաբույսերի ավելացումը տեղի է ունեցել կերային մշակաբույսերի կտրուկ՝ 188,0 հազ. հեկտարով կամ մոտ 3,8 անգամ

[1] Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀԱՎԾ, Ե., 2008: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների և հավաքված բերքի մասին 1997, 2000, 2004, 2007թթ., ՀՀԱՎԾ, Ե.:

կրճատվելու, ինչպես նաև այգիների զանգվածային բանդումների հաշվին: Այստեղ նշված միտումները, աննշան բացառություններով ու առանձնահատկություններով վերաբերվում են գրեթե բոլոր մարզերին: Այս միտումների հետևանքով, ինչպես հանրապետությունում, ընդհանուր առմամբ, նույնպես և մարզերում, դրսևորվել է ցանքատարածությունների միանգամայն նոր կառուցվածք, որն էապես տարբերվում է ելակետային 1990թ. ցուցանիշներից (աղյուսակ 4):

Աղյուսակ 3

Ցանքատարածությունների շարժը ըստ մարզերի[1]

(հազ հեկտար)

Մարզեր	Ընդամենը ցանք		Որից							
			հացահատիկ		կարտոֆիլ		բանջարային		կերային	
	1990	2007	1990	2007	1990	2007	1990	2007	1990	2007
Արագածոտնի	47,7	34,2	22,2	23,0	1,2	1,9	0,8	1,1	23,3	7,4
Արարատի	22,7	21,2	3,3	6,5	1,3	0,8	5,2	6,8	11,2	6,3
Արմավիրի	29,9	32,4	4,8	8,4	0,9	1,4	6,0	8,7	15,4	11,6
Գեղարքունիքի	86,8	71,9	27,7	42,1	7,2	15,6	0,7	2,1	51,1	10,8
Լոռու	39,8	30,5	9,6	12,0	6,3	4,3	0,7	1,2	23,1	13,0
Կոտայքի	38,7	17,4	11,6	13,1	0,5	0,8	1,3	1,4	25,2	2,1
Շիրակի	82,5	52,0	32,3	39,2	2,1	3,0	1,4	1,4	46,7	8,1
Սյունիքի	51,2	27,6	17,2	19,9	1,2	1,8	0,9	0,9	31,7	4,8
Վայոց Ձորի	15,5	3,4	3,6	1,8	0,1	0,2	0,1	0,5	11,7	0,8
Տավուշի	23, 7	14,2	5,6	8,3	1,7	1,8	0,7	0,9	15,3	2,7
Ք.Երևան	1,1	1,1	0,2	0,3	-	0,1	0,1	0,6	0,7	0,1
Ընդամենը	439,6	305,9	138,1	174,6	22,5	31,7	17,9	25,6	255,4	67,7

Աղյուսակ 4

Ցանքատարածությունների կառուցվածքը ՀՀ-ում

Մշակաբույսեր	1990	2007	2007թ. 1990թ. նկատմամբ
Հացահատիկ	31,4	57,1	181,8
Կարտոֆիլ	5,2	10,4	200,0
Բանջարային	4,1	8,3	202,4
Կերային	58,1	22,1	38,0
Այլ	1,2	2,3	175,0
Ընդամենը	100	100	x

Աղյուսակի տվյալներից կարելի է նկատել, որ նոր կառուցվածքն ագրոտեխնիկական առումով, համեմատած ելակետայինի հետ, ունի բացասական բնութագիր: Հացահատիկային մշակաբույսերի բացարձակ գերակշռությունը թողնում է շատ քիչ հնարավորություն ոչ միայն հիմնավորված ցանքաշրջանառությունների, այլ անգամ պարզ պտղափոխությունների կիրառման համար: Այս հանգամանքը պարարտանյութերի և հատկապես օրգանական պարարտանյութերի անբավարար օգտագործման պարագայում կարող է հանգեցնել վարելահողերի բերրիության զգալի անկմանը:

Ցանքատարածությունների անբարենպաստ կառուցվածքին եթե ավելացնենք նաև վարելահողերի մանրատվածության գործոնը, ապա կարելի է գալ այն եզրակացության, որ

[1] Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների և հավաքված բերքի մասին 1997, 2000, 2004, 2007թթ., ՀՀԱՎԾ, Ե.: Հայաստանի գյուղատնտեսությունը 1990-1999թթ., ՀՀԱՎԾ, Ե., 2000:

երկրագործության արդյունավետության բարձրացման համար բացակայում են կարևոր օբյեկտիվ պայմանները:

Բազմամյա տնկարկների տարածքի շարժընթացը ետբարեփոխման ժամանակաշրջանի առաջին փուլում (1991-1997թթ.) բնութագրվում է կրճատման միտումներով: Այս գործընթացը կապված էր հետևյալ հանգամանքների հետ: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանի գինեգործության և պահածոների արտադրության մինչև 85%-ը սպառվում էր Ռուսաստանում և նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում: ԽՍՀՄ փլուզումից հետո, ինչպես հայտնի է, նախկին տնտեսական կապերը նույնպես փլուզվեցին և մեր վերամշակող արդյունաբերությունը, որը սպառում էր խաղողի և պտուղների տեղական արտադրության մինչև 75-80%-ը, հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Բավական է նշել միայն մեկ փաստ: 1980-1985թթ. Հայաստանի գինեգործությունը միջին տարեկան հաշվով մթերել էր 216,0 հազ. տոննա խաղող: 1995-1997թթ. այդ ցուցանիշն իջավ մինչև 17-21 հազ. տոննայի: Սրա հետևանքը եղավ այն, որ Արարատյան հարթավայրի, նախալեռնային և հյուսիսարևելյան գոտիներում սեփականաշնորհման գործընթացում այգիներ ստացած գյուղացիական տնտեսությունները ինտենսիվորեն վերացրեցին այգետարածությունները՝ փոխարինելով դրանք պարենային մշակաբույսերով:

1997-1998թթ. սկիզբ առավ գինեգործության նոր վերելք: Վերաբացվեցին նախկին մի քանի գինեգործարաններ, կառուցվեցին նորերը, կազմավորվեցին գինեգործական ընկերություններ ու միավորումներ, գինեգործական գիգանտ «Պեռնո Ռիկար» (Ֆրանսիա) կոնցեռնը ձեռք բերեց Երևանի կոնյակի գործարանը և ինտենսիվորեն ընդլայնում է արտադրությունը: Նոր կյանք ստացավ Երևանի գինու-կոնյակի կոմբինատը: Անհատ ձեռներեցների ջանքերով, արմատական վերակառուցումից հետո, այն վերականգնեց իր առաջատարի դիրքերը, արտաքին կապերը և հաջողությամբ իրականացնում է իր զարգացման ծրագրերը:

Գինեգործության և պահածոների արդյունաբերության ծավալի աճը, բնականաբար, նոր թափ հաղորդեց խաղողագործության և պտղաբուծության զարգացմանը, ինչն առաջին հերթին արտահայտվեց խաղողի և պտղատու այգիների տարածքների ընդլայնմամբ: Հիշեցնենք, որ վերջին երեք տարիներում այդ աճը կազմեց 9,3 հազար հեկտար, ինչը նշված բնագավառների դինամիկ զարգացման ուղղակի վկայությունն է:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վատ է կազմակերպված բնական կերային հանդակների օգտագործումը: Խոսքը գնում է պետական սեփականություն հանդիսացող տարածքներին, որոնք հանձնված են գյուղապետարանների տնօրինությանը: Սրանք հիմնականում լեռնային արոտավայրերն են, որոնց օգտագործման համար դեռևս չի ստեղծված հստակ և վերահսկելի համակարգ: Չնայած ՀՀ կառավարության կողմից սահմանված է դրանց օգտագործման վարձակալական սկզբունքը և վարձաչափերը, տեղերում դրանք կամ չեն կիրառվում կամ էլ, շատ դեպքերում, դարձել են գյուղապետարանների կամայականությունների ու ստվերային գործարքների ասպարեզ:

Դրականը, թերևս, այս գործում այն է, որ բարվոք վիճակում գտնվող արոտավայրերի մի մասը, մոտավորապես 45-50 հազ. հեկտար, օգտագործվում է որպես խոտհարք, որոնք 2004-2007թթ. հաշվետու տվյալներով, տվել են հեկտարից շուրջ 25-33 ցենտ. բերք:

Ամփոփելով ՀՀ գյուղատնտեսության հողային ֆոնդի օգտագործման իրավիճակի վերլուծությունը նշենք, որ բարեփոխումներից հետո անցած ժամանակաշրջանում այն էապես վատթարացել է: Կրճատվել են ցանքատարածությունները, գյուղատնտեսության ոլորտից դուրս է մնացել վարելահողերի զգալի մասը, կրճատվել են բազմամյա տնկարկների տարածքը, չի կարգավորված բնական կերահանդակների, մասնավորապես արոտների օգտագործման խնդիրը: Այս բոլորն ընդգծում են, որ գյուղատնտեսական հողերի օգտագործման գործընթացում կուտակվել են մեծ թվով հիմնախնդիրներ, որոնց շուտափույթ հանգուցալուծումը հանդիսանում է ագրարային ոլորտի առաջնահերթ խնդիրներից մեկը:

Գյուղատնտեսության հողային ֆոնդի բարելավման ուղղությամբ առաջարկվող միջոցառումների շարքում առաջնակարգ դերը, մեր կարծիքով, պատկանում է նախ գյուղատնտեսական արտադրության կոոպերացմանը, խոշոր ապրանքային արտադրության կազմակերպմանը, ինչպես նաև այս ճյուղում փոքր և միջին բարձրարդյունավետ ձեռնարկությունների կազմակերպմանը և, իհարկե, այն թերությունների վերացմանը, որոնք նշված են սույն հոդվածի տեքստում:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր

ԳԵՐԱՍԻՄ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող տ.գ.թ., պրոֆեսոր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությունը, զարգացման բոլոր փուլերում, միշտ համարվել է տնտեսության առաջնային զարգացման ճյուղերից մեկը և գտնվել է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Խորհրդային իշխանության տարիներից Հայաստանում իրականացվեցին ոռոգման, հողերի մելիորացման, խաղողի և պտղատու այգիների տնկումների խոշոր ծրագրեր, որոնց շնորհիվ երկրի ագրոպարենային ոլորտը դարձավ տնտեսության հզոր ճյուղերից մեկը: Դրան նպաստեցին նաև թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը, մեքենատրակտորային հավաքակայանների հզորացումը, ագրարային գիտության և կրթության արդիական համակարգի ստեղծումը:

Հայաստանն առաջինն էր նախկին Խորհրդային Միության երկրներից, որ ձեռնամուխ եղավ լայնածավալ բարեփոխումների հենց գյուղատնտեսության ոլորտում:

1991թ. գարնանը, մինչև երկրի անկախության հռչակումը, հաշվի առնելով ոլորտի կարևորությունը, հանրապետությունում իրականացվեց հողի սեփականաշնորհման և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառույցների, գյուղատնտեսական մթերքներ մթերող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականությունը: Դա արվեց՝ հաշվի առնելով երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը:Արդյունքում ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Ներկայումս ագրոպարենային համակարգը տալիս է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) մոտավորապես 30%-ը, այդ թվում գյուղատնտեսությունը՝ 19%-ը:

Գյուղատնտեսության մեջ աշխատում են հանրապետությունում աշխատանքով զբաղվածների ընդհանուր թվաքանակի շուրջ 45.0%-ը:

Գյուղատնտեսությունը ոչ միայն ագրոպարենային համալիրի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ ու աշխատատար ճյուղն է և պահանջում է պետության մշտական հոգածություն ներկայիս պահանջներին համապատասխան արդյունավետ կազմակերպում: Գյուղատնտեսու-